ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

---------------------

« 16» մարտի 2015թ.

*ՀԱՐԳԵԼԻ ՄԱՍՆԱԿԻՑ*
*(ըստ ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11 ծածկագրով մրցույթի շրջանակներում գրանցված կազմակերպությունների ցանկի)*

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված ՈՇՀԱՊՁԲ-11/11 շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքները :

Սույն հրավերի ( ծանուցման) ծածկագիր է հանդիսանում « ՀՀՊԿԱ-ՇՀԱՊՁԲ-ՏԱ-15/05» :

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Կիևյան-8 հասցեով, N39 սենյակ, մինչև 2015թ. մարտի 26-ը, ժամը 16 : 00-ն : Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Կ.Սերոբյանը : Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը :

Հայտերը պարունակող ծրարները կբացվեն ՀՀ պետական կառավարման ակադեմիայի շենքում, ք.Երևան, Կիևյան-8 հասցեով,N 39 սենյակում, 2015թ.-ի մարտի 26-ին , ժամը 16 :00-ին :

«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտ ապրանքների մատակարարման տեխնիկական բնութագրերը և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանների անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N1 հավելվածում :

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա/ Գնման ընթացակարգի դիմում

բ/ Գնային առաջարկ : Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով :

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ։

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը ։

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ ։

«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է paara-bugalteria@rambler.ru

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը «Գնումների մասին» օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներից իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է Պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը կամ տվյալները Պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը, ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցների Պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները ։

Առդիր՝ 17էջ:

ՌԵԿՏՈՐ՝ Ա.ԼՈՔՅԱՆ

կատ.՝ Կ.Սերոբյան
հեռ.22-26-20